«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ամսաթիվ՝	**11.05.2026թ.**
Ֆուտբոլային ակումբ՝	**ՖԶԳԽ-001**
Առաջնություն՝	**Ֆուտզալի Հայաստանի Գավաթի Խաղարկություն**
Խաղ՝	**«Յունիսպորտ» - «ՖԱ Սիեվն», 06.05.2026թ.**
Վարույթ՝	**ՖԶԳԽ-001**

Հարգելի՛ գործընկեր,

Կից ներկայացված է ՖԶԳԽ-001 վարույթի շուրջ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից 2026 թվականի մայիսի 9-ին տեղի ունեցած նիստի արդյունքում կայացված որոշումը։

Խնդրում ենք որոշումն ընդունել ի գիտություն և ապահովել վերջինիս կատարումը՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով (2025թ. խմբագրություն) սահմանված կարգով։

Հարգանքով՝

ՀՖՖ Կարգապահական գրասենյակ

Գրասենյակի ղեկավար՝ Գայանե Զաքարյան

Հասցեատեր՝
ՖԱ Սիեվն ՖԱ ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ fcsievn@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09.05.2026թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Լազարյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝	ՖԶԳԽ-001
Խախտում՝	«ՖԱ Սիեվն» թիմի գլխավոր մարզչի օգնական Արշակ Ամիրյանի (250) կողմից ոչ սպորտային պահվածք դրսևորելը (Հավելված 1 Ի, 13-րդ կետ)
Առաջնություն՝	Ֆուտզալի Հայաստանի Գավաթի Խաղարկություն
Խաղ՝	«Յունիսպորտ» - «ՖԱ Սիեվն», 06.05.2026թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025 թվականի խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «ՖԱ Սիեվն» թիմի գլխավոր մարզչի օգնական Արշակ Ամիրյանին (250) զրկել ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից 2 (երկու) խաղով: Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 1 (մեկ) խաղը, պայմանականորեն չկիրառել: «ՖԱ Սիեվն» թիմի գլխավոր մարզչի օգնական Արշակ Ամիրյանի (250) նկատմամբ փորձաշրջան սահմանել 1 (մեկ) ամիս ժամկետով՝ մինչև 2026 թվականի հունիսի 6-ը ներառյալ:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի

գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։

- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։